Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

B

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

2006 թվականի հուլիսի 5-ի

որոշ երրորդ երկրներ եւ երրորդ երկրների որոշ տարածքներ ճանաչվում են Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) (ցիտրուսի համար ախտածին բոլոր շտամները), Ցերկոսպորա անգոլենսիսից (Cercospora angolensis Carv. et Mendes) եւ Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa Kiely) (ցիտրուսի համար ախտածին բոլոր շտամները) ազատ

(ծանուցված՝ C(2006) 3024 փաստաթղթի համաձայն)

C1 (2006/473/ԵՀ)

(ՊS L 187, 08.07.2006թ., էջ 35)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
M1	Հանձնաժողովի 2010 թվականի մարտի 1-ի որոշում	L 53	10	04.03 2010թ.

Ուղղված՝

C1

Ուղղում՝ ՊS L 196, 18.07.2006թ., էջ 26 (473/2006)

▼B

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 թվականի հուլիսի 5-ի ՈՐՈՇՈՒՄ, որով որոշ երրորդ երկրներ եւ երրորդ երկրների որոշ տարածքներ ճանաչվում են Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) (ցիտրուսի համար ախտածին բոլոր շտամները), Ցերկոսպորա անգոլենսիսից (Cercospora angolensis Carv. et Mendes) եւ Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa Kiely) (ցիտրուսի համար ախտածին բոլոր շտամները) ազատ

(ծանուցված՝ C(2006) 3024 փաստաթղթի համաձայն)

C1 (2006/473/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի՝ բույսերի կամ բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանց տարածման դեմ պաշտպանիչ միջոցների մասին 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը[1] եւ, մասնավորապես, դրա IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.2, 16.3 եւ 16.4 կետերը,

Քանի որ

1) որպեսզի թույլատրվի երրորդ երկրներից Ցիտրուս (Citrus L.), չինական Ոսկե նարինջ (Fortunella Swingle), Պոնցիրուս (Poncirus Raf.) մրգերի եւ նրանց հիբրիդների ներմուծումը Համայնք կամ նրանց տեղաշարժը Համայնքում, 2000/29/ԵՀ հրահանգի համաձայն, Հանձնաժողովի՝ 1998 թվականի հունվարի 8-ի 98/83/ԵՀ որոշմամբ, որով որոշ երրորդ երկրներ եւ երրորդ երկրների որոշ տարածքներ ճանաչվում են Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) (ցիտրուսի համար ախտածին բոլոր շտամները), Ցերկոսպորա անգոլենսիսից (Cercospora angolensis Carv. et Mendes) եւ Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa Kiely) (ցիտրուսի

[1] ՊՏ L 169, 10.7.2000թ., էջ 1: Հանձնաժողովի 2006/35/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 88, 25.03.2006թ., էջ 9):

համար ախտածին բոլոր շտամները) ազատ[2] որոշ երրորդ երկրներ եւ երրորդ երկրների որոշ տարածքներ ճանաչվել են այդ վնասակար օրգանիզմներից ազատ,

2) իր ընդունումից ի վեր 98/83/ԵՀ որոշումը մի քանի անգամ փոփոխվել է: Հստակության եւ ողջամտության նկատառումներից ելնելով՝ 98/83/ԵՀ որոշումը պետք է, հետեւաբար, ուժը կորցրած ճանաչել եւ փոխարինել,

3) Նոր Զելանդիան պաշտոնական տեղեկություն է ներկայացրել, որտեղ նշվում է, որ իր տարածքն ազատ է Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) եւ Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa): Նոր Զելանդիան, հետեւաբար, պետք է ճանաչել որպես այդ վնասակար օրգանիզմներից ազատ,

4) Հարավաֆրիկյան Հանրապետությունը պաշտոնական տեղեկություն է ներկայացրել, որտեղ նշվում է, որ Հյուսիսային Քեյփի Հարցվոթեր եւ Վարենտոն դատական շրջաններն ազատ են Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa): Հարավաֆրիկյան Հանրապետության այս շրջանները, հետեւաբար, պետք է ճանաչել որպես այդ վնասակար օրգանիզմից ազատ,

5) Ավստրալիան պաշտոնական տեղեկություն է ներկայացրել, որտեղ նշվում է, որ Քուինսլենդը Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) այլեւս ազատ չէ: Քուինսլենդը, հետեւաբար, այլեւս չպետք է ճանաչել որպես այդ վնասակար օրգանիզմից ազատ,

6) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

[2] ՊՏ L 15, 21.01.1998թ., էջ 41: Խորհրդի 2003/129/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված Որոշում (ՊՏ L 51, 26.02.2003թ., էջ 21):

Հոդված 1

1. IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.2 կետի նպատակներով հետեւյալ երրորդ երկրներն ազատ են ճանաչվել ցիտրուսի համար ախտածին Քսանտոմոնաս կամպեստրիսի (Xanthomonas campestris) բոլոր շտամներից.

ա) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրները Եվրոպայում, Ալժիրը, Եգիպտոսը, Իսրայելը, Լիբիան, Մարոկկոն, Թունիսը եւ Թուրքիան,

բ) Աֆրիկան՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Գամբիան, Գանան, Գվինեան, Քենիան, Սուդանը, Սվազիլենդը եւ Զիմբաբվեն,

գ) Կենտրոնական եւ Հարավային Ամերիկան ու Կարիբյան ավազանի երկրները՝ Բահամները, Բելիզը, Չիլին, Կոլումբիան, Կոստա Ռիկան, Կուբան, Էկվադորը, Հոնդուրասը, Ճամայկան, Մեքսիկան, Նիկարագուան, Պերուն, Դոմինիկյան Հանրապետությունը, Սանտա Լուչիան, Էլ Սալվադորը, Սուրինամը եւ Վենեսուելան,

դ) Օվկիանիան՝ Նոր Զելանդիան:

2. IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.2 կետի նպատակներով հետեւյալ տարածքներն ազատ են ճանաչվել ցիտրուսի համար ախտածին Քսանտոմոնաս կամպեստրիսի (Xanthomonas campestris) բոլոր շտամներից.

▼M1

ա) Ավստրալիան՝ Նոր Հարավային Ուելսը, Հյուսիսային տարածքը, Քուինսլենդը, Հարավային Ավստրալիան, Վիկտորիան եւ Արեւմտյան Ավստրալիան,

▼B

բ) Բրազիլիան՝ բացառությամբ Ռիո Գրանդե դո Սուլ, Սանտա Կատարինա, Պարանա, Սան Պաուլո, Մինաս Ժերայիս եւ Մատո Գրոսո դո Սուլ նահանգների,

գ) Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ Արիզոնան, Կալիֆոռնիան, Գուամը, Հավային, Լուիզիանան, Հյուսիսային Մարիանյան կղզիները, Պուերտո Ռիկոն, Ամերիկյան Սամոան, Տեխասը եւ Ամերիկյան Վիրջինյան կղզիները,

դ) Ուրուգվայը՝ բացառությամբ Սալտո, Ռիվերա եւ Պայսանդու մարզերի (Չապիկույ գետի հյուսիսային մասը):

Հոդված 2

IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.3 կետի նպատակներով հետեւյալ երրորդ երկրներն ազատ են ճանաչվել Ցերկոսպորա անգոլենսիսից (Cercospora angolensis Carv. et Mendes).

ա) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրները Հյուսիսային, Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայում, Կարիբյան ավազանի երկրները, Ասիան՝ բացառությամբ Եմենի, Եվրոպայի եւ Օվկիանիայի,

բ) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրներն Աֆրիկայում՝ բացառությամբ Անգոլայի, Կամերունի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության, Գաբոնի, Գվինեայի, Քենիայի, Մոզամբիկի, Նիգերիայի, Ուգանդայի, Զամբիայի եւ Զիմբաբվեի:

Հոդված 3

1. Ըստ IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.4 կետի՝ հետեւյալ երրորդ երկրներն ազատ են ճանաչվել ցիտրուսի համար ախտածին Գուիգնառդիա ցիտրիկարպայի (Guignardia citricarpa Kiely) բոլոր շտամներից.

ա) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրները Հյուսիսային, Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայում՝ բացառությամբ Արգենտինայի եւ Բրազիլիայի, Կարիբյան ավազանի երկրների եւ Եվրոպայի,

բ) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրներն Ասիայում՝ բացառությամբ Բութանի, Չինաստանի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների եւ Թայվանի,

գ) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրներն Աֆրիկայում՝ բացառությամբ Հարավաֆրիկյան Հանրապետության, Քենիայի, Մոզամբիկի, Սվազիլենդի, Զամբիայի եւ Զիմբաբվեի:

դ) ցիտրուսային բույսեր աճեցնող բոլոր երրորդ երկրներն Օվկիանիայում՝ բացառությամբ Ավստրալիայի եւ Վանուատուի:

2. IV հավելվածի Ա մասի I բաժնի 16.4 կետի նպատակներով հետեւյալ տարածքներն ազատ են ճանաչվել ցիտրուսի համար ախտածին Գուիգնառդիա ցիտրիկարպայի (Guignardia citricarpa Kiely) բոլոր շտամներից.

ա) Հարավաֆրիկյան Հանրապետությունը՝ Արեւմտյան Քեյփը, Հյուսիսային Քեյփի Հարցվոթեր եւ Վարենտոն դատական շրջանները,

բ) Ավստրալիան՝ Հարավային Ավստրալիան, Արեւմտյան Ավստրալիան եւ Հյուսիսային տարածքը,

գ) Չինաստանը՝ բոլոր տարածքները՝ բացառությամբ Սիչուանի, Յունանի, Գուանգդոնգի, Ֆուջիանի եւ Ժեջիանգի,

դ) Բրազիլիան՝ բոլոր տարածքները՝բացառությամբ Ռիո դե Ժանեյրո, Սան Պաուլո եւ Ռիո Գրանդե դո Սուլ նահանգների:

Հոդված 4

98/83/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին: